Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

293

Հսկայական ցնորքեր

Մոսկվա
1879

ԻՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԾԱՅՆ ԻՄ ՈՐԴԻՈՑ

# ՀՍԿԱՅԱԿԱՆ ՁԵՌՔԵՐ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՎԷՊ



Ի ՄՈՍԿՈՒԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՋԱՐՄԱՑՐԱՑ ՄՍԵՐԵԱՆՑ

1879

825
Հ-93
2004

## ՎԱՃԱՌԵԼԻ ԳՐԵԱՆՔ

1· ՀԱՒԱՏԱԳԱՏՈՒՄ, այն է՝ Մանր Ուսմունք Քրիստոնէական հաւատոյ (Краткій Катехизисъ). Մովսէսի Մ. Մսերեանց· գին իւրաքանչիւրոյ 25 կ. արծ.
իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 20 կոպ.
» » » 50 » » 15 »

2· ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ Սրբազան Պատմութեան Աւետարանի (Краткая Священная Исторія Новаго Завѣта). Նոյն հեղին. գին իւրաքանչիւրոյ 40 կ. արծ.
իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 35 կոպ.
» » » 50 » » 30 »

3· ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ Ազգային Եկեղեցական Պատմութեան (Краткая Исторія Армянской Церкви). Նոյն հեղին. գին իւրաքանչիւրոյ 20 կ. արծ.
իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 15 կոպ.
» » » 50 » » 10 »

4· ՀՐԱՀԱՆԳ Քրիստոնէական հաւատոյ, ըստ ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց (Пространный Катехизисъ). Նոյն հեղին. գին իւրաքանչիւրոյ 75 կ. արծ.
իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 60 կոպ.
» » » 50 » » 50 »

5· ՔՐԻՍՏՈՍԱԳԱՏՈՒՄ, այն է՝ համառօտութիւն Աւետարանական պատմութեան հանդերձ ծանօթութեամբ (Священная Исторія Новаго Завѣта, съ примѣчаніями). Նոյն հեղին. գին իւրաքանչիւրոյ 50 կ. արծ.
իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 40 կոպ.
» » » 50 » » 30 »

Z-93

ԻՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԾԱՅՆ ԻՄ ՈՐԴԻՈՑ

# ՀՍԿԱՅԱԿԱՆ ՁԵՌՔԵՐ

ԱՆԳՂԻԱԿԱՆ ՎԷՊ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ԶԱՐՄԱՅՐԱՑ Մ· ՄՍԵՐԵԱՆՑ·



Ի ՄՈՍԿՈՒԱ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԱՐՄԱՅՐԱՑ ՄՍԵՐԵԱՆՑ
1879

№ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ 116.
БИБЛІОТЕКА
Никиты Осиповича
№ ЭМИНА. 29.
ՄԿՐՏՉԻ ԷՄԻՆ.

179

Дозволено цензурою. С.-Петербургъ, 20 февраля 1879 г.

ՀՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

5009
38

Москва. Типогр. А. Гатцука, на Кузнецкомъ мосту, д. Торлецкаго.

# ՀՍԿԱՅԱԿԱՆ ՁԵՌՔԵՐ

## ԱՆԳՂԻԱԿԱՆ ՎԷՊ

ՓՈՔՐԻԿ Վիլեամը նստած է կրակի առաջև և մտածում է. նորա կատուն էլ մօտն է: Նա ապրում է այս խրճթիս մէջ իւր մօր հետ միասին: Այժմ նորա մայրը



տանը չէ: Ես կամենում եմ պատմել ձեզ՝ թէ ինչ բանի վերայ է մտածում Վիլեամը: Նա շատ լաւ տղայ է: Մտածում է նա՝ թէ ինչպէս անէ, որ գտնէ իւր համար գործ ապրուստի համար: Նա կամենում է գործել, փող աշխա-



տել, իւր մօր կեանքը զւարացնելու համար: Այդ բարի կինը շատ աղքատ է: Նա կամի խնդրել իւր մօրը, երբ որ կվերադառնայ տուն, որ նա թողու նորան գնալ աշխատելու:

*
* *

Ահա տեսէք. Վիլեամը իւր փոքրիկ խուրձիկը ուսի վրայ ճանապարհի վրայ է, ճանապարհորդութեան առաջին օրում: Պատանեակս գնում էր—և ահա հանկարծ նորա ուշը գրաւում է մի սպիտակ ամպ, որ կայ երկրի վրայ, ուղղակի նորա հանդէպ: Այդ ամպի միջից երևում են երկու հսկայական ձեռքեր, և լսվում է՝ ինչպէս խօսում է մեկի ձայնը. „Մի վախենար Վիլեամ, ես կլինիմ քեզ ընկեր, ոչ ոք բաց 'ի քեզանից չտեսնէր ինձ, միայն մի փոխիր կամքդ աշխատե-





լու. ես միշտ մօտիդ կլինիմ և քեզ կօգնեմ“: Վիլեամը ամենևին չվախեցաւ և միայն ասաց՝ „շնորհակալ եմ ձեզ բարի ձեռքեր“:

*
* *

Վիլեամը շատ ուրախացաւ, որ ձեռքերը խոստացան օգնելու նորան. Նա վազում և թռչկոտում էր ուրախութիւնից: Երբ որ գիշեր եղաւ, նա զգաց սաստիկ խոնջութիւն: Նա նստաւ ծառի տակին և կերաւ հաց ու պանիր, որ ունէր իւր խուրձի մէջ: Այժմ նա անտառի մէջ է, և լսում է շշնջուն ծովի ալիքների ձայնին նման. Նա այնպէս դադրած է, որ անպատճառ ննջել է հարկաւոր նորան: Ահա նա տեսանում է ինչպէս հսկայական ձեռքերը տարածուեցան նորա



վերայ և կազմեցին վրանի նման մի բան: Նորա սիրտը լի է շնորհակալութեամբ, նա կարդում է իւր աղօթքը, և քնոտ պառկում է կանաչ դալարի վերայ. նա զգում է՝ թէ գտնվում է բոլորովին ապահով վիճակի մէջ այդ ձեռքերի պաշտպանութեան ներքոյ:

***

Միւս օրը Վիլեամ գտանում է գործ մէկ դաստակերտի տիրոջ մօտ: Մենք տեսանում ենք ինչպէս նա հնձում է ցորենը դաշտում և գործում է երկու զօրեղ մարդու տեղ: Բայց՝ բարձր ցորենով ծածկուած՝ հսկայական ձեռքերը գործում են և օգնում նորան: Վիլեամ երգելով շարունակում





է հնձել: Նորա գերանդին փայլում է և ցորենը ընկնում է նորա լայնածաւալ հարուածի տակին:

Երեկոյին դաստակերտի տէրը գալիս է դաշտ և զարմանքով տեսնում է երկար շարքը գեղեցիկ կապուած խուրձերի: Նա նայում է Վիլեամի վերայ զարմանալով և վճռում է թողուլ իւր մօտ այսպիսի աշխատասէր մշակը: „Եթէ նա այսպէս լաւ հնձում է, ուրեմն կարող է գործել և երկիրը", մտածում էր ինքն ըստ ինքեան դաստակերտի տէրը, դաշտէն տուն դառնալու ժամանակ: Եւ ահա միւս օրը Վիլեամ լինում է հողագործ: Հսկայական ձեռքերը կառավարում են արօրը, աներևոյթ ամենեցունց համար, բաց 'ի Վիլեամից: Եւ դաշտը արօրուած է ուղիղ գծերով, այնպիսի ուղիղ,



ինչպէս նետի սլացումը։ Դաստակերտի տէրը նայում է պատուհանից և նորից օրհնում է իւր բաղդը։ Քանի մի ժամանակից յետոյ նա վճռում է շնորհակալութիւն անել աշխատասէր տղային, որ սիրով և ջերմեռանդութեամբ աշխատում է նորա համար։ Նա նշանակեց Վիլեամին գլխաւոր տեսուչ միւս մշակների վերայ և վստահացաւ նորա վերայ բոլորովին։

*
* *

Մէկ օր, երբ որ ոչխարները սարերի վերայ էին, սաստիկ փոթորիկ բարձրացաւ․ ցած տեղերը սարերի միջում շուտով ծածկուեցան անձրևի ջրով․ Վիլեամը գնաց որոնելու իւր տիրոջ ոչխարները․ բայց մինչև նա հաւաքում էր նոցա,





ջուրը թափվում էր արդէն սաստիկ հեղեղով հովտին մէջ, որ բաժանում էր նոցա դաստակերտից։ „Ո՜հ, ինչպէս ես կցանկայի, որ ինձ օգնէին ձեռքերը“, մտածում էր Վիլեամ։ Մէկ վայրկենում հսկայական ձեռքերը տարածուեցան ալեկոծուած ջրի վերայ և կազմեցին կամուրջ․ Վիլեամ քշեց ոչխարները այդ կամուրջի վերայով և անվտանգ հասաւ տուն, յուրախութիւն ամենեցունց, որովհետև նորան կարծում էին կորած։

*
* *

Մէկ անգամ գիշեր ժամանակ Վիլեամ զարթնեցաւ սաստիկ աղաղակից՝ „Կրակ, կրակ“։ Նա մէկ րոպէի մէջ հագնուեցաւ և վազեց դուրս։ Այն տեղ նա գտաւ իւր տէրը և

նորա ծառաները, որք վազվզում էին այս և այն կողմ որպէս ցնորվածք երկիւղից: Խողերը խռնչում և վազվզում էին: Ջուր չկար: Բոցն շարունակում էր իւր զարհուրելի ընդացքը մէկ սենեկից միւսը. վերջապէս նա հասանում է դաստակերտի տիրոջ գեղեցիկ դստեր սենեկին. այդ աղջիկը դեռ այն տեղ է: Ի՞նչ պիտոյ է անել: Տան մեծ սանդուխտը այրուած է. միւսերը կարճ են և չեն հասնում պատուհանին. իսկ այն տեղ կանգնած կայ աղջիկը, ծուխի մէջ, և աղաղակում է մարդոյ սիրտը կտրատող ձայնով և տարածում է ձեռքերը, խնդրելով օգնութիւն: Վիլեամ նայում է նորա վերայ յուսահատութեամբ: Յանկարծ հասանում են հսկայական ձեռքերը, դպչում են պատին և կազմում են մատերով սանդուխտ. Վիլեամ այդ սանդուխտի վերայ շուտով վեր է ելնում. առնում է աղջիկը ձեռք և մէկ րոպէի մէջ ցած է իջուցանում, կենդանի և անվնաս, նորա արտասուք թափող հօր առաջև:

*
* *

Այժմ դուք, շատ կարելի է, կամիք իմանալ՝ թէ ի՞նչ եղաւ Վիլեամի հետ սորանից յետոյ: Նա սկսաւ ստանալ այնպիսի մեծ ռոճիկ, որ կարող եղաւ փող ուղարկել մօրը. իսկ երբ նա մեծացաւ և չափահաս մարդ եղաւ, ինքն դարձաւ լաւ և հարուստ տէր սեպհական—դաստակերտի: Ամենեքեանք սիրեցին նորան:

*
* *

Բայց այդ ի՞նչ հսկայական ձեռքեր էին, որք օգնում էին նորան: Նոքա նշանակում են մարդոյ զօրութիւնը, որ ստանվում է համբերողութեան, բարի կեանքի և անխոնջ աշխատանաց մէջ: Հսկայական ձեռքերը կըտան յօգնութիւն ամենեցունց, որք կամենում են սիրով աշխատել:

024



Երբ Վիլեամ եղաւ հարուստ և դաստակերտի տէր և ունեցաւ գերդաստան, միշտ ասում էր իւր զաւակացը. „պատուով եղէք, բարի եղէք, աշխատասէր և ջանասէր. այն ժամանակ հսկայական ձեռքերը կըտան ձեզ յօգնութիւն“:

„Ընկալ խրատ, մանուկ որդեայ,
Եւ սուրբ գըրոց միշտ ծառայեա՛,
'Ի սըրբութիւն ըզգեղ կըրթեա՛,
'Ի չար գործոց զհոգիդ պահեա՛“:

ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникяна

6· ՆՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ Հայերէն և Ռուսերէն (Армяно-Русская Азбука). Զարմայրայ Մ· Մսերեանց· Գին իւրաքանչիւրոյ 15 կոպ· արծ·

Իսկ եթէ գնեսցի 25 հատ, հատն 10 կոպ·

» » » 50 » » 5 »

7· ՊԱՏՄՈՒԹԻՒՆ կաթողիկոսաց Էջմիածնի 'ի Սիմէօնէ մինչև ցՅովհաննէս Ը· ամք տեառն 1763—1831։ Գրեալ 'ի Մսերայ Մագիստրոսէ Մսերեանց Զմիւռնացւոյ։ Մոսկուա, 1876· 306 երես· գինն է 2 ռ·

8· ՄՍԵՐԱՅ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄՍԵՐԵԱՆՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ· Հատոր Ա· ԽՄԲԱԳԻՐ Զաքարայ Բանեց· Մոսկուա· 1864 ամի, 212 երես։ Սախառախա։ գինն է՝ 3 ռուբ· արծ·

9· ՀՍԿԱՅԱԿԱՆ ՉԵՌՔԵՐ, Անգղիական վէպ։ Թարգմանութիւն Զարմայրայ Մսերեանց։ Պատկերազարդ։ Գին իւրաքանչիւրոյ 10 կոպ·

Իսկ եթէ գնեսցի 50 հատ, հատն 8 կոպ·

» » » 100 » » 5 »

---

Յանկացողքն ստանալ 'ի վերոյ նշանակեալ գրքերից կարող են իւրեանց գրովը դիմել առ իս (г. Зармайру Мсеріанцъ, въ Москву, близъ Меньшиковой башни, домъ Миловановой), ուղարկելով միանգամայն և պատկանեալ գումարը, և ես պատրաստ եմ առաջին փոստիւ կատարել նոցա ցանկութիւնը։

Բոլոր գրեանց գինն նշանակուած են հանդերձ առաքմամբ։

Զարմայր Մսերեանց։

293

Գինն է 10 կոպէկ։

0004328

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0004328